Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

/գնումների գործընթացին մասնակցող անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին/

ք. Երևան 11.09.2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Արամ Մկրտչյանս, ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/13 ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթային փաթեթը, ինչպես նաև «ԿԻՐ - ՔԱՐ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Մասնակից) վերաբերյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գնումների գործընթացին մասնակցող անձանց ներառման հարցերը քննող հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի նիստի արդյունքներով կազմված N 1 արձանագրության առաջարկությունը՝

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 12-ին կազմակերպվել է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/13 ծածկագրով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ապարանի մասնաճյուղի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Մասնակիցը:
3. Գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Մասնակցի հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, ինչի մասին 2023 թվականի օգոստոսի 25-ին կազմվել է N 2-3 արձանագրությունը:
4. Մասնակիցը օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցվել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունների մասին, նրան տրվել է դրանք շտկելու հնարավորություն, սակայն Մասնակցի կողմից ներկայացված շտկումները ոչ ամբողջությամբ են համապատասխանել հրավերի պահանջներին, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի պահանջների և Ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետով սահմանված պայմանի խախտում:

Մասնավորապես Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Մասնակցի կողմից հայտով ներկայացված մի շարք սարքավորումների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

5. Հիմք ընդունելով վերը նշված փաստերը, ինչպես նաև Կարգի 42-րդ կետը՝ Հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 29-ին որոշում է կայացրել Մասնակցի հայտն

անբավարար գնահատելու և մերժելու մասին, ինչի վերաբերյալ կազմվել է N 2-4 արձանագրությունը:

6. Ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի հիման վրա հայտարարել է չկայացած:

7. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 2023 թվականի օգոստոսի 31-ին հրապարակվել է տեղեկագրում:

Այսպիսով Մասնակցի կողմից խախտվել են Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, ինչը հանգեցրել է Ընթացակարգին նրա հետագա մասնակցության դադարեցմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ և 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԿԻՐ - ՔԱՐ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 05543213, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի, Կորի 33 փ., տ. 11) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,
2. Մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի վճարման դեպքում սույն որոշման 1-ին կետը կճանաչվի ուժը կորցրած,
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն,
4. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

11/09/2023

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080